

Վերապատրաստող կազմակերպություն

**ՀՀ ԿԳՄՍ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան  
ավագ դպրոց» ՊՈԱԿ**

**Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների  
վերապատրաստում**

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝**

*<Տեխնոլոգիա  
առարկայի դասավանդման արդյունավետության  
բարձրացման ժամանակակից մեթոդների կիրառում>*

**ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝**

*Մարտունի*

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ՝**

*Հասմիկ Բեյրության*



**Установите Google Документы!**

Вносите изменения, оставляйте комментарии и редактируйте файлы одновременно с другими пользователями.

*Ճնահիտ Սողոյան*

*Դոկաբարի Ալ. Վարդանյանի  
անվան*

*N 2 միջնակարգ դպրոց*

НЕТ

УСТАНОВИТЬ ПРИЛОЖЕНИЕ

**Մարտունի-2022**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Նախաբան.....	...	3
2.	Տեխնոլոգիա կրթական ոլորտի նպատակներն են.....		4
3.	Առարկայի ընդհանուր բնութագիրը.....		5
4.	Տեխնոլոգիա առարկայի մեթոդների նկարագրում.....		7
5.	Տեխնոլոգիա առարկայի դասերին՝ ՏՀՏ-ների օգտագործումը.....		9
6.	Եզրակացություն.....		14
7.	Գրականության ցանկ.....		15
8.	Դասի պլան.....		16

## Նախաբան

Տեխնոլոգիա կրթական ոլորտը հանդիսանում է ընդհանուր միջնակարգ կրթության բաղկացուցիչ մասը, որը սովորողներին զինում է անհրաժեշտ տեխնիկատեխնոլոգիական գիտելիքներով, հասկացություններով և ունակություններով, առանց որոնց անհնար է երկրի լիարժեք սոցիալ-տնտեսական առաջընթացը, անձի ձևավորումը, ազգային լավագույն ավանդույթների պահպանումը: «Տեխնոլոգիա» հանրակրթական առարկայի հիմնական առաքելությունն է սովորողներին նախապատրաստել ժամանակակից տեղեկատվական արդյու- նաբերական հասարակարգում ինքնուրույն աշխատանքային կյանքին եւ դաստիարակել կիրթ, ստեղծագործ, նախաձեռնող եւ ակտիվ անձնավորություն:

Հետարդյունաբերական հասարակարգը բնորոշվում է տեղեկատվության կտրուկ աճով, ինչը XX դարի վերջում բերեց նոր տեխնոլոգիաների առաջացմանը եւ արտա- դրության տեխնոլոգիաների արագ փոփոխմանը: Համաձայն վիճակագրական տվյալների՝ մարդն իր աշխատանքային գործունեության ընթացքում մի քանի անգամ ստիպված է փոխել իր գործունեությունը եւ դա բերում է հանրակրթական դպրոցների աշակերտների տեխնոլոգիական լայն պատրաստվածության պահանջին: Վերջին տարիներին զգալիորեն փոխվել է «Տեխնոլոգիա հասկացության իմաստը: Եթե նախկինում այն ուներ մարդու գործունեության հաջորդականության եւ նյութերի մշակման համար անհրաժեշտ սարքավորումների, էներգիայի, տեղեկատվությունների մասին գիտելիքների իմաստ, ապա այժմ «Տեխնոլոգիան ուսումնասիրում է մարդու կողմից իր նպատակների համար մատերիայի, էներգիայի եւ տեղեկատվության պլանավորված փոխակերպումն ու օգտագործումը: Տեխնոլոգիան ճանաչողական գիտություն է, որն ուղղված է մատուցելու անհրաժեշտ քանակական և որակական արդյունքներ: Տեխնոլոգիան ճանաչողական գիտություն է, որն ուղղված է մատուցելու անհրաժեշտ քանակական և որակական արդյունքներ: Տեխնոլոգիան ճանաչողական գիտություն է, որն ուղղված է մատուցելու անհրաժեշտ քանակական և որակական արդյունքներ:

համակարգման, գործունեության նկարագրման եւ վերլուծման, իրականացման եւ օպտիմալացման, այդ գործունեության արդյունքների, զարգացման եւ միջոցների ձեռքբերման եւ կիրառման ուսումնասիրմանը: Տեխնոլոգիան դպրոցում ինտեգրացնող կրթական ոլորտ է, որը համադրում է գիտելիքներ մաթեմատիկայից, ֆիզիկայից, քիմիայից, կենսաբանությունից և այլ հանրակրթական առարկաներից, ցույց է տալիս դրանց օգտագործումը արդյունաբերության, էներգետիկայի, կապի, գյուղատնտեսության, տրանսպորտի և մարդու այլ գործունեություններում:

### **Տեխնոլոգիա կրթական ոլորտի նպատակներն են՝**

Տեխնոլոգիան ըստ էության գործնական-ուղղորդող ուսուցողական ոլորտ է: Սովորողների կողմից նյութերի, էներգիայի և տեղեկատվության ձևափոխման ուսումնասիրումը թույլ է տալիս նրանց ձեռք բերել այդ ձևափոխումներին տիրապետելու փորձ, օգնում է մասնագիտության և հետագա աշխատանքի ընտրությանը: Այդպիսով ապահովվում է սովորողների հաջորդական անցումը ընդհանուրից մասնագիտական կրթությանը:

- սովորողների պոլիտեխնիկական զարգացումը, նրանց ծանոթացումը տեխնիկայի հիմունքներին, նյութերի ձևափոխման ժամանակակից և առաջընթաց տեխնոլոգիաներին, էներգիայի փոխակերպումներին, տեղեկատվությանը՝ հաշվի առնելով 4 տնտեսական, էկոլոգիական և ձեռնարկատիրական գիտելիքներն ու սոցիալական հետևանքները,
- ստեղծագործական և գեղագիտական զարգացումը, մասնավորապես՝ նախագծերի կատարման և նյութերի գեղարվեստական մշակման ընթացքում, -
- ընդհանուր աշխատանքային և կենսապես անհրաժեշտ հմտությունների և ունակությունների տիրապետումը, այդ թվում՝ աշխատանքի կուլտուրա, ոչ կոնֆլիկտային շփում, որն անհրաժեշտ է խմբային աշխատանքի պայմաններում և ընտանիքում, -
- ինքնաճանաչման հնարավորության ապահովումը,

մասնագիտությունների ուսումնասիրումը, տարրական մասնագիտական փորձի ձեռքբերումը՝ հիմնված մասնագիտական կողմնորոշման վրա:

Այս նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է՝ ձևավորել նոր սոցիալ-տնտեսական իրավիճակներում ստեղծագործաբար մտածող, ակտիվ գործող և արագ կողմնորոշվող անհատներ, որոնք կկարողանան որոշել արտադրանքի պահանջարկը, քանակը և իրացման ուղիները: Դրա համար սովորողները պետք է ունակ լինեն որոշել այս կամ այն արտադրանքի կամ ծառայությունների ծավալի քանակը, գտնել և օգտագործել անհրաժեշտ տեղեկատվությունը, առաջ քաշել նոր մտքեր այս կամ այն ծագող խնդիրների լուծման համար (կոնստրուկցիայի մշակում և տեխնոլոգիաների ընտրություն), պլանավորել, կազմակերպել և կատարել աշխատանք (մեխանիզմների կարգավորում, օպերատորական գործունեություն), գնահատել նրա արդյունքները յուրաքանչյուր փուլում, կարգավորել իր գործունեությունը և բացահայտել արտադրանքի իրացման պայմանները, - ձևավորել գիտելիքներ և հմտություններ միջոցների, նյութերի, էներգիայի և տեղեկատվության նպատակային օգտագործման համար, - ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում որակական և ստեղծագործական մոտեցում, անհատի բազմակողմանի որակների զարգացում և փոփոխվող սոցիալտնտեսական պայմաններում մասնագիտական հարմարվողունակության ձևավորում:

### **Առարկայի ընդհանուր բնութագիրը**

Հանրակրթության պետական չափորոշչով «Տեխնոլոգիա առարկան որպես ԲՏՃՄ ոլորտի պարտադիր առանձին կամ ինտեգրված առարկա ուսումնասիրվում է 1-6-րդ դասարաններում: 7-12 դասարաններում ևս

ուսումնասիրվում է 1-3-րդ դասարաններում. 7-12 դասարաններում այս կարող է ներկայացվել «Արվեստ և արհեստ» ոլորտի մեկ ինտեգրված առարկայով: Առարկայի բովանդակությունը կառուցվում է 5 հիմնարար գաղափարների վրա՝ գծային սկզբունքով: «Տեխնոլոգիա առարկայի ուսուցումը տարրական դպրոցում ուղղված է նախնական աշխատանքային հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, նյութերից, կենցաղային սարքերից, աշխատանքային գործիքներից և սարքավորումներից անվտանգ օգտվելու հմտությունների ձևավորմանը: Այն նպատակաուղղված է ընդլայնելու սովորողների գիտելիքները տարբեր նյութերի 5 հատկությունների, աշխատանքային գործիքների գործառույթների, մարդու կյանքում աշխատանքի դերի, կարևորության, տարբեր մասնագիտությունների մասին, տիրապետելու նյութերի մշակման եղանակներին, գործիքներն անվտանգ կիրառելուն և նյութերն արդյունավետ օգտագործելուն: Պրակտիկ-առարկայական գործունեությունը կրտսեր դպրոցականներին հնարավորություն կտա նախապատրաստվել հետագա աշխատանքին, տարբեր նյութերի հետ աշխատելու ձևերին, դաստիարակել «նյութի յուրօրինակ զգացողություն», առանց որի անհնար է ազատ, գեղարվեստական-ստեղծագործական գործունեությունը: Տարրական դասարաններում ուսումնասիրության առանցքը նյութերն են, դրանց հատկությունների ուսումնասիրությունը, մշակման եղանակների տիրապետումը /պարզից բարդ սկզբունքով/: Առաջին և երկրորդ դասարաններում ուսումնասիրությունների հիմքը թուղթն է, բնական և արհեստական նյութերը: Մանածագործական նյութերով աշխատանքը սկսվում է երրորդ դասարանից, երբ երեխաներն արդեն նյութերի հետ աշխատելու բավականաչափ փորձ կունենան և կկարողանան անվտանգ աշխատել տարբեր տեսակի ասեղներով, մկրատներով: Աշխատանքի տեսակների ընտրությունն էլ նույն սկզբունքով է կատարվում՝ ապլիկացիա, խճանկար, օրիգամի /հարթ, ապա տարածական/, մոդուլային օրիգամի, թելանկար, կոմպոզիցիա և այլն: Չորրորդ դասարանից սկսվում է ծանոթացումը գծագրական պարզ գործիքներին, հայկական գեղարվեստական արհեստներին, դեկորատիվ-կիրառական արվեստին, հայկական զարդանախշերի իմաստային ու գաղափարական բովանդակությանը, գեղարվեստական շինվածքներ նախագծելու պարզագույն տեխնիկաներին: «Տեխնոլոգիա առարկայի ուսուցումը միջին դպրոցում ենթադրում է սովորողների ընդհանուր տեխնոլոգիական իրազեկվածություն՝ տեխնոլոգիական մտածողության ձևավորման նպատակով, կիրառական տեխնոլոգիական գիտելիքների և

կենցաղային հմտությունների ձևավորում: Այն նպատակաուղղված է ընդլայնելու աշակերտների գիտելիքները գիտության նվաճումների, բնության, մարդու և հասարակության վրա տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցության մասին, ձևավորելու ձեռնարկատիրական նախնական գիտելիքներ, իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողություններ: Այն նաև նպաստում է սովորողների մասնագիտական կողմնորոշմանը՝ տարբեր արհեստներին ծանոթացնելու միջոցով:

### **Տեխնոլոգիա առարկայի մեթոդների նկարագրում**

Ժամանակակից կրթական հայեցակարգերում խրախուսվում են ուսուցման այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք առավել չափով են նպաստում սովորողների կողմից գիտելիքի հայտնաբերման գործընթացին: ԽԻԿ-ը ժամանակակից ուսուցման մեթոդների համակարգ է, որը ուսուցման գործընթացը բաժանում է հետևյալ փուլերի՝

- Խթանում:
- Իմաստի ընկալում:
- Կշռադատում:

Բնութագրելով յուրաքանչյուր փուլում ուսուցչի անելիքը՝ ԽԻԿ-ը նաև առաջ է քաշում մի շարք մեթոդներ՝ տվյալ փուլին անհրաժեշտ արդյունքին հասնելու համար: Խթանման փուլի հիմնական նպատակներից են՝

- Նոր նյութի վերաբերյալ բացահայտել սովորողների գիտելիքները, քննարկվելիք նյութի մեջ ներգրավելով ակտիվացնել աշակերտներին, աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում: Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի խթանման փուլում՝

- Մտագրոհ, խմբավորում, պրիզմա, մտածիր-զույգ կազմիր-քննարկիր, ձնագնդի, հինգ բույսանոց ազատ շարադրանք: Իմաստի ընկալման փուլի նպատակներից են՝

- Սովորողների մոտ հետաքրքրության աճի պահպանումը, տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը, նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը: Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի իմաստի ընկալման փուլում՝

- T-աձև աղյուսակ, գաղափարների քարտեզ, Վենի դիագրամ, փոխգործուն նշանների համակարգ, խորանարդում, խճանկար, երեք բանալի և մեկ կողպեք, շրջագայություն պատկերասրահում:

Կշռադատման փուլի նպատակներից են՝

- Սովորողը նոր ստացած տեղեկատվությունը կարողանա արտահայտել իր բառերով և ձևակերպումներով, նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրացում: Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի կշռադատման փուլում՝

- Քառաբաժան, խորանարդում: Տեխնոլոգիան գիտելիքների, հմտությունների, արժեքների և վերաբերմունքի նպատակային կիրառումն է մարդկային կարիքներն ու ցանկությունները բավարարող ապրանքներ կամ համակարգեր ստեղծելու համար]:

«Տեխնոլոգիան ճանաչողական գիտություն է, որն ուղղված է մարդու գործունեության բարեփոխման, գիտելիքների համակարգման, գործունեության օպտիմալացման, արդյունքների զարգացման: «Տեխնոլոգիա ուսումնական առարկայի նպատակը ստեղծարար, նորարար, նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումն է, ով արվեստին ու արհեստին հաղորդակցվելու, աշխատանքի պրակտիկ ձևերին և նորագույն տեխնոլոգիաներին տեղադրվելու ուսուցումն է»



տնօրինելու միջոցով ստեղծում է մարդկային կարիքներին ու ցանկություններին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր: Այն տեխնոլոգիական միջավայրի և արտադրական գործընթացների նկարագրությանը, գաղափարները գործողության վերածելու հմտությունների ձևավորմանը միտված շարունակական գործընթաց է, որի նպատակը մարդու բարեկեցությունն է նախաձեռնողականության և ստեղծարարության տեխնոլոգիական մոտեցումն իբրև համընդհանուր ալգորիթմ որոշում է ուսումնական առարկայի նպատակը: Տեխնոլոգիա առարկան նպաստում է շուկայական տնտեսության պայմաններում սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորում է բազմակողմանի և ներդաշնակ զարգացած անձ, նախապատրաստում է նրան ինքնուրույն կյանքին:

## **Տեխնոլոգիա առարկայի դասերին՝ ՏՀՏ-ների օգտագործումը**

ՏՀՏ գործիքների օգտագործումը հնարավորություն է տալիս դասի ժամանակ ուժեղացնել ճանաչողական գործողությունները և ակտիվ մասնակից են լինում դասին: Կրթական ՏՀՏ գործիքները կարող են դասակարգվել ըստ մի շարք պարամետրերի.

1. Ըստ լուծված մանկավարժական առաջադրանքների.

- նշանակում է հիմնական դասընթացների տրամադրում (էլեկտրոնային դասագրքեր, ուսումնական համակարգեր, գիտելիքների կառավարման համակարգեր);

- գործնական ուսուցման գործիքներ (խնդիրների գրքեր, սեմինարներ, միուրուսա ուղղաձիգներ, սեմինարներ, ծրագրեր

սահմանափակում, գործառնական հրահանգներ, սրտաբանական սրահանգներ, սիմուլյատորներ);

- օժանդակ միջոցներ (հանրագիտարաններ, բառարաններ, գրքեր կարդալ, համակարգչային խաղեր զարգացնել, մուլտիմեդիա դասընթացներ);

- բարդ միջոցներ (հեռակա):

2. Ըստ ուսումնական գործընթացի կազմակերպման գործառնությունների.

- տեղեկատվություն և ուսուցում (էլեկտրոնային գրադարաններ, էլեկտրոնային գրքեր, էլեկտրոնային պարբերականներ, բառարաններ, տեղեկատու գրքեր, ուսումնական համակարգչային ծրագրեր, տեղեկատվական համակարգեր);

- ինտերակտիվ (էլ. փոստ, էլեկտրոնային հեռակոնֆերանս);

- որոնիչներ (կատալոգներ, որոնիչներ):

3. Ըստ տեղեկատվության տեսակի.

- էլեկտրոնային և տեղեկատվական ռեսուրսներ տեքստային տեղեկատվությամբ (դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, խնդրագրքեր, թեստեր, բառարաններ, տեղեկատու գրքեր, հանրագիտարաններ, պարբերականներ, թվային տվյալներ, ծրագրեր և ուսումնական նյութեր);

- տեսողական տեղեկատվությամբ էլեկտրոնային և տեղեկատվական ռեսուրսներ (հավաքածուներ, լուսանկարներ, դիմանկարներ, նկարազարդումներ, գործընթացների և երևույթների տեսահոլովակներ, փորձերի ցուցադրում, վիդեո շրջայցեր, վիճակագրական և դինամիկ մոդելներ, ինտերակտիվ մոդելներ, խորհրդանշական օբյեկտներ՝ գծապատկերներ,

գծապատկերներ);

▪ աուդիո տեղեկատվությամբ էլեկտրոնային և տեղեկատվական ռեսուրսներ (բանաստեղծությունների ձայնագրություններ, դիդակտիկ խոսքի նյութեր, երաժշտական ստեղծագործություններ, կենդանի և անկենդան բնույթի հնչյուններ, համաժամեցված աուդիո օբյեկտներ), աուդիո և վիդեո տեղեկատվությամբ էլեկտրոնային և տեղեկատվական ռեսուրսներ (կենդանի և անկենդան բնույթի աուդիո և վիդեո օբյեկտներ, առարկայական էքսկուրսիաներ): 6 Ցանկացած կրթական համակարգի տեղեկատվական միջավայրի հիմնական ՏՀՏ գործիքը անհատական համակարգիչն է, որի հնարավորությունները որոշվում են դրա վրա տեղադրված ծրագրակազմով: Ծրագրակազմի հիմնական կատեգորիաներն են համակարգչային ծրագրերը, կիրառական ծրագրերը և ծրագրակազմի մշակման գործիքները: Համակարգչային ծրագրերը, առաջին հերթին, ներառում են գործառնական համակարգեր, որոնք ապահովում են մնացած բոլոր ծրագրերի փոխազդեցությունը ապարատային համակարգի հետ և անհատական համակարգչի օգտագործողի փոխազդեցությունը ծրագրերի հետ: Կիրառական ծրագրերը ներառում են ծրագրակազմ, որը տեղեկատվական տեխնոլոգիաների գործիքակազմ է՝ տեքստերի, գրաֆիկայի, աղյուսակային տվյալների և այլնի հետ աշխատելու տեխնոլոգիաներ: Ժամանակակից կրթական համակարգերում լայնորեն օգտագործվում են գրասենյակային ունիվերսալ ծրագրերը և ՏՀՏ գործիքներ՝ աղյուսակներ, շնորհանդեսների պատրաստման ծրագրեր, տվյալների շտեմարանի կառավարման համակարգեր, կազմակերպիչներ, գրաֆիկական փաթեթներ և այլն: Համակարգչային ցանցերի և դրանց նման այլ ՏՀՏ գործիքների ի հայտ գալով՝ կրթությունը ձեռք է բերել նոր որակ՝ կապված առաջին հերթին աշխարհի ցանկացած կետից տեղեկատվություն արագ ստանալու կարողության հետ: Համաաշխարհային համակարգչային ցանցի միջոցով ինտերնետը հնարավոր է անհապաղ մուտք դեպի համաաշխարհային տեղեկատվական ռեսուրսներ՝

Էլեկտրոնային գրադարաններ, տվյալների շտեմարաններ, ֆայլերի պահեստներ և այլն: ՏՀՏ ցանցի գործիքների միջոցով հնարավոր է դառնում լայնորեն հասանելի լինել կրթական, մեթոդական և գիտական տեղեկատվությանը, կազմակերպել գործառնական խորհրդատվական օգնություն, հետազոտական գործունեության մոդելավորում, իրական ժամանակում վիրտուալ դասընթացների (սեմինարների, դասախոսությունների) անցկացում: ՏՀՏ շնորհիվ հնարավոր է դառնում դասախոսություններ հեռարձակել լայն լսարանին՝ այս լսարանի ընդհանուր զարգացումը մեծացնելու համար՝ առանց գիտելիքների ձուլման հետագա վերահսկողության, ինչպես նաև գիտելիքները հատուկ թեստերի և քննությունների միջոցով հետազայում ստուգելու ունակության: Այս տեխնոլոգիաները համապատասխան կատարելագործմամբ թույլ են տալիս առկա դասընթացները հարմարեցնել անհատական օգտագործման, հնարավորություն են տալիս ինքնուրույն ուսումնասիրել և ձեռք բերել ստացած գիտելիքները: Ի տարբերություն ավանդական գրքի, կրթական էլեկտրոնային հրատարակությունը թույլ է տալիս նյութը ներկայացնել դինամիկ գրաֆիկական տեսքով:

Ժամանակակից մարդը, աշակերտը ապրում է էլեկտրոնային մշակույթի աշխարհում: Տեղեկատվական մշակույթում ուսուցչի դերը փոխվում է, նա պետք է դառնա տեղեկատվության հոսքի համակարգողը: Ժամանակին համընթաց ուսուցիչը այսօր հոգեբանորեն և տեխնիկապես պատրաստ է ուսուցման ընթացքում օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները: Դասի ցանկացած փուլ կարող է վերականգնվել նոր տեխնիկական միջոցների ներդրմամբ: ՏՀՏ-ի ներառումը ուսումնական գործընթացում ուսուցչին հնարավորություն է տալիս դասարանում կազմակերպել կրթական և ճանաչողական գործունեության տարբեր ձևեր, ակտիվ և նպատակային դարձնել ուսանողների ինքնուրույն աշխատանքը: Համակարգիչը կարող է օգտագործվել բոլոր փուլերում. Ե՛ւ դաս պատրաստելիս, և՛ ուսումնառության

ընթացքում՝ նոր նյութ բացատրելիս (ներկայացնելիս), համախմբելիս, կրկնելիս: Այսօր մեծ ուշադրություն է դարձվում ուսուցման ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմանը: Մեր խնդիրը պետք է ուղղված լինի ոչ այնքան տարբեր ոլորտներից աշակերտներին հատուկ գիտելիքներ փոխանցելուն, որքան նրանց ինքնորոշման ապահովմանը:

Ընդհանրապես հանրակրթական առարկեն դասավանդելու համար առաջին կարևոր է ծանոթ լինել նրա չափորոշչին, չափորոշչում առկա հայեցակարգ մասին նպատակներին ու խնդիրներին հստակ պատկերացնելու համար թե ինչի համար ենք դասավանդում: Երկրորդ հերթին կարևոր է իմանալ ծրագրային բովանդակությունը, այսինքն՝ թե ինչն ենք դասավանդում, խոսքը զուտ գաղափարային բնույթի, այսինքն՝ ակադեմիական գիտելիքի մասին է, ինչ գիտելիք պետք է հաղորդել սովորողին: Այս ամենը ճշտելուց հետո անդրադառնում ենք սովորեցնելու-ուսուցանելու ձևերին, այսինքն՝ մեթոդներին, որոնք իրենցից ներկայացնում են ուսումնական պրոցեսի կազմակերպման, իսկ ավելի կոնկրետ դասի կազմակերպման ձևեր՝ որտեղից սկսել և ինչպես ու դեպի ուր գնալ:

Իմանալով հստակ մեր անելիքները որևէ թեմայի-գաղափարի դասավանդման վերաբերյալ, հաջորդ քայլին ձեռնամուխ ենք լինում անհրաժեշտ միջոցներ հավաքագրմանը, կլնեն նկարներ, աղյուսակներ, դասից դուրս հետաքրքրաշարժ նյութեր և այլն: Անհրաժեշտության դեպքում նախորոք հարկ է պատրաստել գործնական աշխատանքների տեխնոլոգիական քարտեր և հրահանգչական քարտեր և գործընթացի կատարման և գործընթացի ընթացքում անհրաժեշտ անվտանգության, արդյունավետության բարձրացման և այլնի մասին:

Թեմայի դասավանդումը ակտիվ մեթոդներով ավելի հետաքրքիր է դարձնում դասը: Առավել ևս տեսական դասերին, ուստի դրա համար էլ դասի

պլանավորման համար ընտրվել է խմբային աշխատանքի մեթոդը, որի ընթացքում դրական փոխկախվածություն ունենալով միմյանցից սովորողների մոտ ձևավորվում են այնպիսի սոցիալական հմտություններ ինչպիսիք են միմյանց օգնելու կարողությունը, միմյանց աջակցելու կարողությունը, կոլեկտիվ աշխատանքի առանձնահատկություններ և այլն:

Գնահատման հարցում արդյունավետ է և թիմային աշխատանքի և անհատական աշխատանքի գնահատումը, որպեսզի երկու գործոնների ուղղությամբ էլ, անհատական և կոլեկտիվ, ձևավորվի դրական աճ: Որոնք հետագայում խթան կհանդիսանան հասարակության մեջ կոլեկտիվ էթիկայի ձևավորմանը:

Մի խոսքով դասավանդումն իրենից ներկայացնում է բավականին բարդ գործընթաց, որի բաղադրիչներն են դասավանդման նյութը, ուսումնառության նյութերը, դասավանդման և գնահատման մեթոդիկաները, ինչպես նաև ուսուցչի բարձր վարպետությունը՝ դասի ընթացքում սովորեցնողից՝ աջակցող, աջակցողից՝ ընկեր, ընկերոջից՝ սրտացավ և անաչառ գնահատող լինելու համար: Ինչպես նաև կարևոր հանգամանք է դասի ընթացքում դրված խնդիրների ճիշտ ընտրությունը և դրանց լուծման հնարների ճիշտ օգտագործումը, ներանց հերթականության դասավորումը, պարզից դեպի բարդը գնացող, հեշտից դեպի դժվար, և ինչու չէ նաև հակառակը:

## **Եզրակացություն**

Այսպիսով դասավանդման ավանդական մեթոդների և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների համադրությունը կարող է ուսուցչին օգնել այս բարդ խնդիրը լուծելիս: Անհրաժեշտ է երեխային սովորեցնել գործնականում տիրապետել, վերափոխել և օգտագործել հսկայական քանակությամբ տեղեկատվություն: Շատ

կարևոր է կազմակերպել ուսուցման գործընթացը այնպես, որ երեխաները ակտիվորեն աշխատեն դասի ընթացքում: Կրթական գործընթացների վրա ՏՀՏ-ի ազդեցության համատեքստում ձևավորվում է ժամանակակից ուսուցչի մի տեսակ, որը ոչ միայն պետք է տիրապետի գիտելիքների տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում, այլև կարողանա դրանք կիրառել սեփական մասնագիտական գործունեության մեջ:

ՏՀՏ կիրառման հիմնական նպատակը.ապահովել կրթության արդյունավետության բարձրացում: Տեղեկատվական տեխնոլոգիայի կիրառում դասարանում դա անհրաժեշտ է, և դա պայմանավորված է այն փաստով, որ նրանք

- թույլ են տալիս արդյունավետորեն կազմակերպել խմբային և անկախ աշխատանք դասարանում
- նպաստել ուսանողների գործնական հմտությունների և կարողությունների կատարելագործմանը.
- թույլ են տալիս անհատականացնել ուսման գործընթացը.
- մեծացնել հետաքրքրությունը դասի նկատմամբ
- ակտիվացնել աշակերտների ճանաչողական գործունեությունը
- զարգացնել ուսանողներ:

Այս պայմաններում առաջանում է այլ տիպի աշակերտ, որը չի պատկերացնում իր կյանքը առանց անհատական համակարգչի և Համաշխարհային ցանցի ՚ինտերնետի, օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորությունները որպես տեղեկատվության աղբյուր: Հետաքրքրությամբ և ոգևորությամբ տեսնի իր աշխատանքի

պտուղները և կարողանա գնահատել դրանք:

#### Գրականության ցանկ

1. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ <> ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳԻՐ (1-7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)
2. Պապիկյան Կ., «Տեխնոլոգիայի» դասավանդման մեթոդիկա, 1-4 դասարաններ, Երևան, հեղ. հրատ., 2019 թ.:
3. Հովսեփյան Ս., Հարությունյան Ա., Աղաջանյան Մ., Վերդյան Լ., «Տեխնոլոգիա», ք. Երևան, 2008 թ.:
4. ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ 2017



## **Դասի պլան**

Առարկան՝ Տեխնոլոգիա

Դասարանը՝ V Տնողությունը՝ 45 րոպե

Թեման՝ <<Փայտանյութ: Փայտանյութի արատները:>>

Նպատակ՝ Ծանոթանա փայտանյութի տեսակների և նրա արատների հետ:

Դասի տիպը՝ Համակցված

Դասի կահավորումը, նհրաժեշտ պարագաներ՝ փայտանյութի տեսականի, արատներով փայտյա կտորներ: Հրահանգչական քարտ-պաստառներ սահիկաշար:

### **ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ**

1. Կազմակերպչական մաս

2. Նախորդ դասի հարցում /Դասի թեման՝ Մասշտաբ, չափադրում, երկրաչափական կառուցումներ/

ա/ Ինչ ես հասկանում 1:1, 1:2 մասշտաբ ասելով: Ինչ տարբերություն կա դրանց մեջ:

բ/ Որ երեք տեսքերի օգնությամբ են կատարում երկրաչափական կառուցումները:

գ/ Ինչպես են գծագրերում կատարում չափադրումներ

3. Նոր նյութի հաղորդում

Ծառերի տեսակները,

ոռոնսիս ստապում է

փայտանյութը

Փայտանյութ: նրա կառուցվածքը, տեսակները, հատկությունները:  
Փայտանյութի արատները:

Փայտանյութ

Փայտանյութը ժողովրդական տնտեսության համար շատ կարևոր նշանակություն ունի: Այն լայնորեն օգտագործվում է շինարարության մեջ, քիմիական, մեքենաշինական, լեռնային և արդյունաբերության այլ ճյուղերում:

Փայտանյութից պատրաստում են բազմատեսակ իրեր և առարկաներ, շինվածքներ և դետալներ: Փայտանյութի այդքան լայն օգտագործումը պայմանավորված է նրա տեխնիկական բարձր հատկություններով: Մետաղի ու քարի համեմատությամբ փայտանյութը հեշտ է մշակվում: Լինելով թեթև ունի համեմատաբար մեծ ամրություն, աչքի է ընկնում ցածր ջերմահաղորդականությամբ, լավ է սոսնձվում, հաճախ ունենում է գեղեցիկ արտաքին տեսք, լավ է գեղերեսվում և այլն: Շինվածքների կոնստրուկցիաները

Ինչ մասերից է կազմված ծառը

Ինչի համար է այն օգտագործվում

Ինչի համար է այն օգտագործվում

Ինչի համար է այն օգտագործվում մշակելիս և պատրաստելիս հաշվի են առնվում փայտանյութի վերոհիշյալ դրական և բացասական հատկությունները:

Դուք գիտեք, որ փայտանյութը ստանում են ծառից: Ծառերը լինում են երկու տեսակի՝ սաղարթավոր և փշատերև: Յուրաքանչյուր ծառ կազմված է արմատներից, բնից, և գագաթամասից /ճյուղեր, տերևներ/: Արդյունաբերության մեջ օգտագործվում է այս մասերից յուրաքանչյուրը: Օրինակ, արմատներից ստանում են տարբեր տեսակի խեժեր, կոլոփոն, սկիբիդար և այլն: Տերևներից և փշատերևներից կարելի է ստանալ եթերային յուղեր վիտամիններ և այլ բուժիչ պատրաստուկներ: Իսկ ճյուղերը հիմնականում կիրառում են որպես վառելիք:

Փայտի առավել կիրառական տեսակներից են

ա/ Սոճի: Սա փափուկ, խեժային միացություններով ներծծված, բաց կարմիր գույնի փայտանյութ է, որը կիրառվում է դռների, լուսամուտների, հատակի, կահույքի և այլ սարքերի մասերի պատրաստման համար:

բ/ Կեչի: Սա սպիտակ, կարմրավուն երանգով ճահճուտ տեսակի փայտանյութ է, որն աչքի է ընկնում իր ամրությամբ, սակայն խոնավ պայմաններում շուտ փտում է, լավ է մշակվում: Օգտագործվում է նրբատախտակների դահուկների և կահույքի պատրաստման համար:

գ/Հացենի: Սա սպիտակադեղնավուն գեղեցիկ տեքստուրայով փայտանյութ է: Ամուր է և մածուցիկ, լավ է մշակվում և չորացնելիս չի ճաքճքվում: Կիրառվում է կահույքի, մանրահատակների, նրբատախտակների արտադրության մեջ:

դ/ Կաղնի: Այս փայտանյութն օժտված է գեղեցիկ, դեղնադարչնագույն երանգի տեքստուրայով: Աչքի է ընկնում մեծ ամրությամբ և լավ ծռման հատկություններով: Օգտագործվում է հիմնականում կահույքի արտադրության մեջ: